ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

18 հոկտեմբերի 2016 թվական N17-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N19-Ա, N20-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ «ԱԳԱՐԱԿԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ, «ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼԵՀՎԱԶԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ,15-րդ, 26-րդ կետերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետով, «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-9, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարի 2016 թվականի հոկտեմբերի 12-ի ««Ագարակի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության Կարճևանի մասնաճյուղ ստեղծելու մասին» N19-Ա և «Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության Լեհվազի մասնաճյուղ ստեղծելու մասին» N20-Ա որոշումները:

2.Հաստատել «Ագարակի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության Կարճևանի մասնաճյուղի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1-ի

3.Հաստատել «Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության Լեհվազի մասնաճյուղի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 2-ի:

Կողմ (9) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2016թ. հոկտեմբերի 18
ք. Մեղրի

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի
Համայնքի ավագանու 2016թ.
հոկտեմբերի 18-ի N17-Ա որոշման

I.ԸՆԴՀԱՆՈՒՐԴՐՈՒՅԹՆԵՐ

1.<<Ագարակի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության /այսուհետ՝ հաստատության/ Կարճևանի մասնաճյուղ /այսուհե տմասնաճյուղ/ շահույթ ստանալուն պատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող առանձնացված ստորաբաժանում է,որն իրականացնում էնախադպրոցական կրթական ծրագրեր Մեղրի համայնքի Կարճևան գյուղում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:
2.Մասնաճյուղն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:
3.Մասնաճյուղի գտնվելու վայրն է՝ գյուղ Կարճևան, 4-րդփողոց 8/1:
4. Մասնաճյուղը,որպեսսեփականություն, չունիառանձնացվածգույք:
5. Մասնաճյուղը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:
6. Մասնաճյուղն չունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
7. Մասնաճյուղում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

II. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎՆՊԱՏԱԿԸ

8. Մասնաճյուղի գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործունեության իրականացումն է:
Մասնաճյուղի կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:
10. Մասնաճյուղը ,համագործակցելով ընտանիքի հետ, ապահովում է մասնաճյուղում ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, հայրենի լեզվով հաղորդակցվել և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:
11. Մասնաճյուղի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքներիզ ուզորդման, անձիազատզարգացման, ինքնավարության կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

բնույթի սկզբունքների վրա:
12. Մասնաճյուղը պատասխանատու է պետական չափորոշիչներին, նախակրթական պետական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ–հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:
13. Մասնաճյուղը կարող է զբաղվել հետևյալ ձեռնարկատիրական գործունեության տեսակներով
ա/լրացուցիչ վճարովի կրթական ծառայությունների կազմակերպում,
բ/մարզա-առողջարարական ծառայությունների կազմակերպում,
գ/զարգացման շեղումներով երեխաների համար հոգեբանական-շտկողական ծառայությունների կազմակերպում,
դ/երեխաների ձեռքի աշխատանքների ցուցահանդես վաճառքի կազմակերպում:

III. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

14. Մասնաճյուղի երեխաների համակազմի համալրման կարգը և խմբերի առավելագույն խտությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչներով:
15. Մասնաճյուղ ընդունվում են մինչև վեց տարեկան երեխաները՝ նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա ձևավորված խմբերում: Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք (խառը) խմբեր, որոնց գործունեությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան:
16 Մասնաճյուղում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության համալիր ծրագրին համապատասխան: Մասնաճյուղը կարող է մշակել և, նախարարության հետ համաձայնեցնելով, իրականացնել նաև նախադպրոցական կրթության հեղինակային ծրագրեր:
17. Մասնաճյուղի աշխատանքային ռեժիմը, մասնաճյուղում երեխաների մնալու տևողությունը, կրթադաստիարակչական խմբերի համալրման և սննդի կազմակերպման կարգը որոշվում են նախարարության մեթոդական ցուցումներին համապատասխան: Թույլատրվում է մասնաճյուղի կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը մասնաճյուղ:
18. Մասնաճյուղի երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:
19. Մասնաճյուղի երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում է

մասնաճյուղի հաստիքային բժշկական աշխատողների միջոցով, որոնք մասնաճյուղի ղեկավարության հետ պատասխանատվություն են կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:
20. Մասնաճյուղի մանկավարժական և սպասարկող անձնակազմերը համայնքի բյուջեի հաշվին պարբերաբար ենթարկվում են բժշկական քննության:

IV. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

21. Մասնաճյուղի կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները երեխաներն են, ծնողները (օրինական ներկայացուցիչները), մանկավարժական աշխատողները:
22. Երեխաների ընդունելության ժամանակ մասնաճյուղի ղեկավարը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են մասնաճյուղի գործունեությունը:
23. Մասնաճյուղի և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով՝հաստատության տնօրենի վավերացմամբ:
24. Երեխայի և մասնաճյուղի աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, երեխայի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:
25. Մասնաճյուղում աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր ունեն նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում:
26. Մասնաճյուղի աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքներն ու արտոնությունները որոշվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, մասնաճյուղի կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:
27. Մասնաճյուղի աշխատողներն իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու մասնաճյուղի կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

V. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

28. Մասնաճյուղի կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝հաստատության տնօրենը և մասնաճյուղի ղեկավարը (այսուհետ՝ ղեկավար):
29.Մասնաճյուղի հիմնադիրն ունի մասնաճյուղի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
30. Համայնքի ղեկավարն իրականացնում է մասնաճյուղի ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
31. Հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով, համայնքի ղեկավարի բոոր լիազորությունները տարածվում են նաև մասնաճյուղի վրա:
32. Մասնաճյուղի ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ

կազմակերպման նպատակով ձևավորվում է ծնողական խորհուրդ:
33.Ղեկավարն իրականացնում է մասնաճյուղի ընթացիկ գործունեության ղեկավարումը: Ղեկավարն օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
34.Ղեկավարը՝
ա)առանց հաստատության տնօրենի լիազորագրի չի կարող ղեկավարել.
բ)մասնաճյուղի ղեկավարը կատարում է հաստատության տնօրենի օրենքով սահմանված կարգով բոլոր հրամանները,հրահանգները և որոշումները
գ) մասնաճյուղի ղեկավարը իր բոլոր գործողությունները համաձայնեցնում է հաստատության տնօրենի հետ:
35. Ղեկավարի բացակայության դեպքում, հաստատության տնօրենի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ:
36.Հաստատության մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը) մասնաճյուղում՝
ա)իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարում.
բ) ապահովում և վերահսկում է տիպային ծրագրի դրույթների և մեթոդական հանձնարարականների կատարումը.
գ) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.
դ)կազմակերպում է մասնաճյուղի մեթոդկաբինետի աշխատանքը.
ե)ուսումնասիրում է դաստիարակների առաջավոր փորձը և ընդհանրացնում այն.
զ)դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին, ծանոթացնում մեթոդական հանձնարարականներին.
է)կազմակերպում է աշխատանք ծնողների շրջանում:
37.Դաստիարակը՝
ա) պարտավոր է պահպանել երեխաների կյանքը, աշխատանք տանել նրանց առողջությունը ամրապնդման ուղղությամբ, զարգացնել նրանց ստեղծագործական երևակայությունը.
բ) պատասխանատու է երեխաների համակողմանի զարգացման և դաստիարակության համար.
գ)մշտապես համագործակցում է երեխայի ընտանիքի հետ, կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:
38.Երաժշտական ղեկավարը՝
ա)տիպային ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է երեխաների երաժշտական դաստիարակությունը.
բ)ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում երեխաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ.
39. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝
ա) կազմակերպում է մասնաճյուղի տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.
բ) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.

39.Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը
ա)կազմակերպում է մասնաճյուղի տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի
գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը
բ)մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը
գ)հետևում է մասնաճյուղի տեղամասի, շենքի, գույքին սարքավորումների վիճակին
միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար
դ)պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական
կարգապահության համար:

VI. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՒՅՔԸ ԵՎՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

40.Հաստատությանտնօրենը `մասնաճյուղի հայտերի հիման վրա, յուրաքանչյուր
ուստարվա համար մասնաճյուղի օգտագործմանն է հանձնում անհրաժեշտ գույք:
41.Մասնաճյուղի սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը
42. Հաստատության տնօրենն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից մասնաճյուղին
ամրացված գույքը:
43.Մասնաճյուղը ֆինանսավորում է հիմնադիրը:

VII .ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

44. Մասնաճյուղը վերակազմակերպվում և լուծարվում էՀայաստանի Հանրապետության
օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համայքնի ղեկավար՝ Մ.Զաքարյան

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզիՄեղրի
Համայնքի ավագանու 2016թ.
հոկտեմբերի 18-ի N17-Ա որոշման

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության /այսուհետ՝ հաստատության/ Լեհվազի մասնաճյուղ /այսուհետ մասնաճյուղ/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող առանձնացված ստորաբաժանում է, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր Մեղրի համայնքի Լեհվազ գյուղում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:
2. Մասնաճյուղն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:
3. Մասնաճյուղի գտնվելու վայրն է՝ գյուղ Լեհվազ, 3-րդ փողոց թիվ 1:
4. Մասնաճյուղը, որպես սեփականություն, չունի առանձնացված գույք:
5. Մասնաճյուղը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:
6. Մասնաճյուղն չունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
7. Մասնաճյուղում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

II. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

8. Մասնաճյուղի գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործունեության իրականացումն է:
9. Մասնաճյուղի կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:
10. Մասնաճյուղը, համագործակցելով ընտանիքի հետ, ապահովում է մասնաճյուղում ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվել և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:
11. Մասնաճյուղի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:
12. Մասնաճյուղը պատասխանատու է պետական չափորոշիչներին, նախակրթական

պետական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ–հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:

13. Մասնաճյուղը կարող է զբաղվել հետևյալ ձեռնարկատիրական գործունեության տեսակներով.

ա/ լրացուցիչ վճարովի կրթական ծառայությունների կազմակերպում,

բ/ մարզա-առողջարարական ծառայությունների կազմակերպում,

գ/զարգացման շեղումներով երեխաների համար հոգեբանական – շտկողական ծառայությունների կազմակերպում,

դ/ երեխաների ձեռքի աշխատանքների ցուցահանդես վաճառքի կազմակերպում:

III. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

14. Մասնաճյուղի երեխաների համակազմի համալրման կարգը և խմբերի առավելագույն խտությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչներով:

15. Մասնաճյուղ ընդունվում են մինչև վեց տարեկան երեխաները՝ նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգաց-ման առանձնահատկությունների հիման վրա ձևավորված խմբերում: Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք (խառը) խմբեր, որոնց գործունեությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան:

16. Մասնաճյուղում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության համալիր ծրագրին համապատաս-խան: Մասնաճյուղը կարող է մշակել և, նախարարության հետ համաձայնեցնելով, իրա-կանացնել նաև նախադպրոցական կրթության հեղինակային ծրագրեր:

17. Մասնաճյուղի աշխատանքային ռեժիմը, մասնաճյուղում երեխաների մնալու տևողությունը, կրթադաստիարակչական խմբերի համալրման և սննդի կազմակերպման կարգը որոշվում են նախարարության մեթոդական ցուցումներին համապատասխան: Թույլատրվում է մասնաճյուղի կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը մասնաճյուղ:

18. Մասնաճյուղի երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

19. Մասնաճյուղի երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում է մասնաճյուղի հաստիքային բժշկական աշխատողների միջոցով, որոնք մասնաճյուղի ղեկավարության հետ պատասխանատվություն են կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ

նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

20. Մասնաճյուղի մանկավարժական և սպասարկող անձնակազմերը համայնքի բյուջեի հաշվին պարբերաբար ենթարկվում են բժշկական քննության:

IV. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

21. Մասնաճյուղի կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները երեխաներն են, ծնողները (օրինական ներկայացուցիչները), մանկավարժական աշխատողները:
22. Երեխաների ընդունելության ժամանակ մասնաճյուղի ղեկավարը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են մասնաճյուղի գործունեությունը:
23. Մասնաճյուղի և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով՝ հաստատության տնօրենի վավերացմամբ:
24. Երեխայի և մասնաճյուղի աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, երեխայի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:
25. Մասնաճյուղում աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր ունեն նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական – մանկավարժական որակավորում:
26. Մասնաճյուղի աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքներն ու արտոնությունները որոշվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, մասնաճյուղի կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:
27. Մասնաճյուղի աշխատողներն իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցել ու մասնաճյուղի կառավարմանը, համատեղությամբ կատարել ու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

V. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

28. Մասնաճյուղի կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը և մասնաճյուղի ղեկավարը (այսուհետ՝ ղեկավար):
29. Մասնաճյուղի հիմնադիրն ունի մասնաճյուղի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
30. Համայնքի ղեկավարն իրականացնում է մասնաճյուղի ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
31. Հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով, համայնքի ղեկավարի բոլոր լիազորությունները տարածվում են նաև մասնաճյուղի վրա:
32. Մասնաճյուղի ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում է ծնողական խորհուրդ:
33. Ղեկավարն իրականացնում է մասնաճյուղի ընթացիկ գործունեության ղեկավարումը: Ղեկավարն օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

34. Ղեկավարը՝
ա)առանց հաստատության տնօրենի լիազորագրի չի կարող ղեկավարել.
բ)մասնաճյուղի ղեկավարը կատարում է հաստատության տնօրենի օրենքով սահմանված կարգով բոլոր հրամանները, հրահանգները և որոշումները
գ)մասնաճյուղի ղեկավարը իր բոլոր գործողությունները համաձայնեցնում է հաստատության տնօրենի հետ:

35. Ղեկավարի բացակայության դեպքում, հաստատության տնօրենի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ:

36. Հաստատության մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը) մասնաճյուղում՝
ա)իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարում.
բ) ապահովում և վերահսկում է տիպային ծրագրի դրույթների և մեթոդական հանձնարարականների կատարումը.
գ) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.
դ)կազմակերպում է մասնաճյուղի մեթոդկաբինետի աշխատանքը
ե)ուսումնասիրում է դաստիարակների առաջավոր փորձը և ընդհանրացնում այն.
զ)դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին, ծանոթացնում մեթոդական հանձնարարականներին.
է)կազմակերպում է աշխատանք ծնողների շրջանում:

37. Դաստիարակը՝
ա) պարտավոր է պահպանել երեխաների կյանքը, աշխատանք տանել նրանց առողջությունը ամրապնդման ուղղությամբ, զարգացնել նրանց ստեղծագործական երևակայությունը.
բ) պատասխանատու է երեխաների համակողմանի զարգացման և դաստիարակության համար.
գ) մշտապես համագործակցում է երեխայի ընտանիքի հետ, կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

38. Երաժշտական ղեկավարը՝
ա) տիպային ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է երեխաների երաժշտական դաստիարակությունը.
բ) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում երեխաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ.

39. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝
ա) կազմակերպում է մասնաճյուղի տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, զույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.
բ) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր – հայտերի կազմմանը.
գ) հետևում է մասնաճյուղի տեղամասի, շենքի, զույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.
դ) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

VI. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

40. Հաստատության տնօրենը՝ մասնաճյուղի հայտերի հիման վրա, յուրաքանչյուր ուստարվա համար մասնաճյուղի օգտագործմանն է հանձնում անհրաժեշտ զույք:

41. Մասնաճյուղի սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:
42. Հաստատության տնօրենն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից մասնաճյուղին ամրացված գույքը:
43. Մասնաճյուղը ֆինանսավորում է հիմնադիրը:

VII .ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

44. Մասնաճյուղը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համայնքի ղեկավար Գ. Մ. Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

18 հոկտեմբերի 2016 թվական N18-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N16-Ա ՈՐՈՇՈՒՄԸ, «ՄԵՂՐԻԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ, 15-րդ, 26-րդ կետերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-9, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարի 2016 թվականի հոկտեմբերի 11-ի «Մեղրիի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N16-Ա որոշումը:
2.Հաստատել «Մեղրիի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1-ի
3.Հաստատել «Մեղրիի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:

Կողմ (9)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ		
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ		
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ		
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ		
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ		
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2016թ. հոկտեմբերի 18
ք. Մեղրի

Հավելված N2
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու
2016 թվականի հոկտեմբերի 18-ի N18-Ա որոշման

Համայնքի ղեկավար՝ Մ.Զաքարյան

ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿ

<<ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀՈԱԿ-ի

1. Աշխատողների թվաքանակը՝ 29
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/Հ	Պաշտոնների անվանումը	Հաստիքային միավորների թիվը	Դրույքաչափը	Հավելավճար	Ամսական աշխատավարձ	Ընդամենը տարեկան աշխ.ֆոնդ
1	Տնօրեն	1	80000	0	80000	960000
2	Տնօրենի տեղակալ	1	80000	0	80000	960000
3	Տնօրենի տեղակալ գրադարանի գծով	1	80000	0	80000	960000
4	Տնօրենի օգնական	0,5	77904	0	38952	467424
5	Հաշվապահ	0,5	72800	0	36400	436800
6	Հաշվետար	0,75	77904	0	58428	701136
7	Գործավար	1	77904	0	77904	934848
8	Երգի ստուդիայի դասուսույց	0,5	77904	0	38952	467424
9	Օպերատոր	0,5	77904	0	38952	467424
10	Կազմակերպիչ	1	77904	0	77904	934848
11	Գրադարանավար	3	72800	0	218400	2620800
12	Մարզիչ ծանրամարտի	0,5	77904	0	38952	467424
13	Մարզիչ ֆուտբոլի	2	72800	0	145600	1747200
14	Մարզիչ Ձյուդոի	0,5	72800	0	36400	436800
15	Բուժքույր	0,5	72800	0	36400	436800
16	Տնտեսվար	1	72800	0	72800	873600
17	Հսկիչ-բանվոր	2	72800	0	145600	1747200
18	Հավաքարար	4.5	72800	0	327600	3931200
	ԸՆԴԱՄԵՆԸ	21.75			1629244	19550928

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 19-Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ՉԱՔԱՐՅԱՆ

<< ՄԵՂՐԻԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐԱՆ>>
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ք.ՄԵՂՐԻ 2016Թ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 <<ՄԵՂՐԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ >> Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետև՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, ոչ առևտրային կազմակերպություն է,որը ստեղծվել է սպորտի և մշակույթի բնագավառում հանրության պահանջների բավարարման ուղղված՝ մարզամշակույթային արժեքների պահպանման,ստեղծման և տարածման,մշակույթային բարիքների,ծառայությունների մատուցման գործունեություն իրականացնելու նպատակով, նպաստելու ազգային ու միջազգային,սպորտային և մշակույթային ձեռքբերումներին հանրությանը հաղորդակից լինելուն:Ապահովելու համայնքի բնակչության գրադարանային-տեղեկատվական սպասարկման մատչելիությունը:

1.2Կազմակերպությունը ստեղծված է համարվում նրա օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

1.3Պաշտոնական անվանումն է՝

Հայերեն՝_ <<ՄԵՂՐԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ >> Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Ռուսերեն՝_МЕГРИ СПОРТКУЛТУРНИЙ ЦЕНТР>> Сообщества некоммерческой организаци

Անգլերեն՝_ 'MEGHRI SPORT CURTURAL Center for Community Non-Profit Organization

Գտնվելու վայրն է՝_ՀՀ Սյունիքի մարզ,համայնք Մեղրի Ադելյան 3:

1.4. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայքն է՝ ի դեմս Մեղրիի համայնքի ավագանու/այսուհետ Հիմնադիր/,իսկ հիմնադի կողմից ,որպես համայնքային կազամակերպության

կառավարումն իրականացնող լիազորված համայնքային մարմին հանդիսանում է Մեղրիի համայնքապետը, որի ենթակայությանն է հանձնվում կազմակերպությունը:

1.5 Կազմակերպությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

1.6 Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

1.7Հաստատությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

1.8. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

1.9Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

1.10. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա սպորտային,մշակույթային հաստատությունների և կազմակերպությունների հետ:

1.11. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1 Կազմակերպությունը ստեղծվում է Ազգային սպորտի և մշակույթի քարոզչության ,ազգային ու միջազգային սպորտային ու մշակութային ձեռքբերումների հանրությանը հաղորդակից դարձնելու, համայնքի բնակչության գրադարանային-տեղեկատվական սպասարկման մատչելիությունը ապահովման նպատակով:

2.2. Կազմակերպության նպատակներն են՝

- -մարզամշակութային դաստիարակության իրականացում
  - արտադպրոցական գեղագիտական դաստիարակության իրականացում.

- բնակչության սոցիալական և տարիքային տարբեր խմբերի համար արվեստի
- զանազան ճյուղերի, մշակույթի և արհեստների ուսուցողական ծրագրերի իրականացում.
  - համագործակցում ՀՀ և օտարերկրյա մշակութային կազմակերպությունների հետ՝ համատեղ ծրագրերի իրականացման և մշակման միջոցով.
  - պետական մարմինների, կազմակերպությունների, միությունների հետ միասին երաժշտական, թատերական, մարզական, կինեմատոգրաֆիայի, արվեստի, գիտության, տարբեր փառատոներ, ցուցահանդեսների կազմակերպում.
  - հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով
- դաստիարակված անձի ձևավորում.

2.3 Կազմակերպությունը կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով.

ա) սեփական տեսաձայնագրությունների տարածում.

բ) համերգային գործունեություն.

գ) հրատարակչական գործունեություն.

դ) համակարգչային ուսուցման իրականացում.

ե) համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում.

զ) ճամբարների կազմակերպում.

է) ներկայացումների, համերգների և կրթական գործունեության այլ տեսակների կազմակերպում:

3.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

3.1Կազմակերպության կառուցվածքը հաստատում է Հիմնադիրը;Կազմակերպությունը կարող է ունենալ կառուցվածքային ստորաբաժանումներ:

3.2Սպորտային ծառայությունների բնագավառում Կամակերպությունը իրականացնում է

3.3 Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով պարապողների առողջության պահպանում ու ամրապնդում:

3.4Հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատրաստականության ապահովումը:

3.5 Ընտրված մարզաձևում պարապողների մարզական ընդունակությունների կատարելագործում:

3.6 Հայաստանի Հանրապետության ազգային հավաքական թիմերի համար հերթափոխի պատրաստում:

3.7 Սպորտային ծառայության՝ գործունեության առարկան համապատասխան ուսումնական ծրագրերի իրականացումն է :

- Սորտային ծառայության ոլորտում գործում են սկզբնական պատրաստականության, ուսումնամարզական, մարզական կատարելագործման խմբեր:
- Աշխատանքի հիմնական ցուցանիշ է համարվում
  ՝ ա/ պարապողների խմբի կայունության պահպանումը
  բ/ վարպետ թիմերի և ազգային հավաքական թիմերի համալրումը :
- Սպորտային ծառայության ուսումնամարզական գործընթացի հիմնական ձևերն են խմբակային ուսումնամարզական և տեսական պարապմունքները, աշխատանքը անհատական պլանով, բժշկավերականգնիչ միջոցառումները, մասնակցությունը մրցումներին, հավաքներին:

- ՈՒսումնամարզական գործընթացը կազմակերպում է ուսումնամարզական հավաքներ՝

  ա/ հանրապետական մրցումներին նախապատրաստվելու համար

  բ/ միջազգային մրցումներին նախապատրասվելու համար

  գ/ ընդհանուր և հատուկ ֆիզիկական պատրաստականության նպատակով:

3.7 Մարզադպրոցը իրավունք ունի օրենքով սահմանված կարգով միջազգային կապեր հաստատել արտերկրյա մարզական կազմակերպությունների հետ, կազմակերպել համատեղ միջոցառումներ, սպորտային պատվիրակություններ, համաձայնագրեր կնքել մարզական մանկավարժական աշխատանքների փոխանակման վերաբերյալ:

3.8 Գրադարային ծառայության բնագավառում Կազմակերպությունը իրականացնում է.

- Միասնական գրքային ֆոնդի ընթացիկ նհետադարձ համալրումը,օգտագործում է համալրման տարբեր աղբյուրներ,այդ գործում հաշվի է առնվում կառուցվածքային ստորաբաժանումների և մասնաճյուղերի,ինչպես նաև ազգաբնակչության պահանջները:Համագործակցում է այլ գրադարանների հետ,պայմանագիր է կնքում գրահրատարակիչ նգրավաճառ կազմակերպությունների, հաստատությունների,անհատների հետ:
- Կատարում է ֆոնդի գրանցումը անվանական և գումարային հաշվառումը: Մշակում է տպագիր արտադրանքի և տեսալսողական նյութերի ամբողջ ֆոնդը:Ստեղծում է այբենական,կարգային, առարկայական կատալոգներ և քարտարաններ:
- Կատարում էընթերցողների ինֆորմացիոն-մատենագիտական չբավարարված պահանջների հաշվառում:Այդ մասին ըստ պատկանելիության հայտնում է հանրապետական մեթոդական կենտրոնների,և նրանց օգնությամբ կատարում պահանջը:
- Կազմում ընթացիկ և հեռանկարային աշխատանքային պլաններ;

- Հոգ է տանում կադրերի գրադարանային մատենագիտական գիտելիքների հարստացման և մտահորիզոնի ընդլայնման ուղղությամբ:Այդ նպատակով կազմակերպում կադրերի ուսուցում տեղում:
- Գրադարանից օգտվող ընթերցողներին տրվում է միասնական տոմս;
- Գրադարանային ծառայության համար համայնքի բյուջեի միջոցների հաշվին հատկացվող սուբսիդիան պետք է ապահովի՝
    1. Գրադարանային հավաքածուների համալրումը և օգտագործման տրամադրումը
    2. Ցուցահանդեսների և միջոցառումների տրամադրումը:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4.1. Կազմակերպության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, դրա լիազորած համայնքային մարմինը և Կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը: Կազմակերպության լիազորված համայնքային մարմնի ղեկավարը, Կազմակերպության գործադիր մարմինը, նրա տեղակալները Կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող Կազմակերպության:

4.2. Կազմակերպության Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի;

Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) Կազմակերպության հիմնադրումը,

բ) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների՝ այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

գ) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը;

դ) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,

ե) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,

զ) Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը,

է) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,

4.3 Լիազորված համայնքային մարմինը (Մեղրիի համայնքապետը)՝ իրականացնում է

Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

Հիմնադիրը՝

ա) իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը,

բ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

դ) լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները,

ե) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

զ) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, Հիմնադրի որոշմամբ կամ սույն

կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է) հաստատում է Կազմակերպության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը, հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

ը) իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ:

Կազմակերպության գործադիր մարմինը.

ա) Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված համայնքային մարմինը՝ Մեղրիի համայնքպետը

բ) Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը Հիմնադրի անունից ստորագրում է լիազորված համայնքային մարմնի ղեկավարը:

դ) Կազմակերպության տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական ու ստեղծագործական աշխատանքից:

ե) Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը պատճառած վնասի համար

4.5 Կազմակերպության տնօրենը՝

ա) օրենքով, Հիմնադրի ու լիազորված համայնքային մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրության, Հիմնադրի կամ լիազորված

գ) ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրի ու լիազորված համայնքային մարմնի որոշումներով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

դ) տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝

վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

4.6. աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և կարգապահական տույժեր: Կազմակերպության կազմում հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ ստեղծվելու դեպքում նշանակում և աշխատանքից ազատում է դրանց ղեկավարներին (տնօրեններին)

4.7. բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

4.8. սահմանում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

4.9. օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

թ) ապահովում է Կազմակերպության գործունեության մասին համապատասխանահաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներկայացնում լիազորված համայնքային մարմին,

ժ) իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

5.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

5.1 Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով

նրան հանձվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

5.2 Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և /կամ/ սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել ևօգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

5.3 Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Կազմակերպությունը:

5.4 Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

5.5 Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց

օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք: Հիմնադիրն իրավունք ունի հետ

վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:

5.6 Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման: Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը համայնքի անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ Հիմնադրի

Որոշմամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ Հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած

եկամուտները Կազմակերպության սեփականությունն են Կազմակերպությանն

ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները

հանդիսանում են Հիմնադրի սեփականությունը:

5.7 Հիմնադրի կողմից գույքը Կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ Հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

5.8 Հիմնադրի կողմից Կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման

պահից:

5.9 Կազմակերպության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուր են հանդիսանում ՀՀ պետական և համայնքային բյուջեներից հատկացումները, վճարովի ծառայություններից և սույն կանոնադրությամբ նախատեսված ու ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեության արդյունքում գոյացած սեփական միջոցները, իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր ներդրումներն ու հանգանակությունները, տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված մարզական, ուսումնամարզական, կրթամշակութային և այլ դրամաշնորհները: Տարբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են կազմակերպության եկամուտների մեջ և կազմում նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդ:

5.10. Լիցենզավորված գործունեության տեսակներով Կազմակերպությունը կարող է

զբաղվել միայն Կազմակերպության ստացած լիցենզիայի, կամ Հիմնադրի համապատասխան որոշման ու հանձնարարականի հիման վրա:

5.11. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման

համար: Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը:

5.12. Կազմակերպության կողմից իր կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

5.13. Կազմակերպության համար բյուջեով ուղղակիորեն նախատեսված միջոցների սահմաններում Կազմակերպության կողմից պետությանը մատուցվող ծառայությունների, աշխատանքների և ապրանքների գնումն իրականացվում է մեկ աղբյուրից գնումների կատարման ձևով: Կազմակերպության կողմից այլ ծառայություններ, աշխատանքներ կարող են մատուցվել կամ ապրանքներ իրացվել միայն «Գնումների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

5.14. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները

վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

5.15. Համայնքային կազմակերպությունը Հիմնադրի կողմից սահմանված կարգով

պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

5.16. Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրն ու Հիմնադրի կողմից լիազորված համայնքային մարմինը:

5.17. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) լիազոր մարմնի կողմից ընտրված աուդիտորի կողմից:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

6.1. Համայնքային Կազմակերպությունը կարող է վերակազմավորվել կամ լուծարվել Հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Համայնքային Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դատական կարգով

6.2 Համայնքային Կազմակերպության լուծարման դեպքում, պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, մնացած գույքն ուղղվում է համայնքի բյուջե:

6.3 Համայնքային Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերիի 2016 թվական N19- Ա

«ՄԵՂՐՈՒ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱՐԿԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, առաջնորվելով հիմնարկի կանոնադրությամբ և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-9, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Լուծարել «Մեղրու մշակույթի կենտրոն» հիմնարկը (այսուհետ՝ Հիմնարկ)՝ առանց իրավահաջորդի:
2.Հաստատել լուծարման հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
3.Հաստատել լուծարման հետևյալ կարգը և պայմանները՝
1)Լուծարումն իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սահմանված կարգով,
2)պարտատերերի պահանջ ներկայացնելու ժամկետ սահմանել երկու ամիս,
3)պարտատերերը պահանջ կարող են ներկայացնել գրավոր ձևակերպված Հիմնարկի իրավաբանական հասցե առաքված գրությամբ,
4) Լուծարման հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում ավարտել Հիմնարկի լուծարման գործընթացը և 20-օրյա ժամկետում լուծարումից հետո մնացած գույքը հանձնել ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկի հաշվեկշռին:

Կողմ (9) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2016թ. հոկտեմբերի 18
ք. Մեղրի

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի
համայնքի ավագանու 2016 թ.
հոկտեմբերի 18-ի N19-Ա որոշման

ԿԱԶՄ
«ՄԵՂՐԻԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱՐԿԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ՝
Վանիկ Սարգսյան
Անդամներ՝
Սամվել Հայրապետյան–«Մեղրիի մշակույթի կենտրոն» հիմնարկի տնօրեն
Արմինե Ստեփանյան--«Մեղրիի մշակույթի կենտրոն» հիմնարկի հաշվապահ
Արթուր Հայրապետյան- Մեղրիի համայնքապետարանի գլխավոր մասնագետ
Սվետլանա Հակոբյան- Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՉԱՔԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերիի 2016 թվական N20- Ա

«ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՅՐ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱՐԿԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, առաջնորվելով հիմնարկի կանոնադրությամբ և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-9, դեմ-0, ձեռնպահ 0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Լուծարել «Մեղրի քաղաքի կենտրոնական մայր գրադարան» հիմնարկը (այսուհետ՝ Հիմնարկ)՝ առանց իրավահաջորդի:

2.Հաստատել լուծարման հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

3.Հաստատել լուծարման հետևյալ կարգը և պայմանները՝

1)Լուծարումն իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սահմանված կարգով,

2)պարտատերերի պահանջ ներկայացնելու ժամկետ սահմանել երկու ամիս,

3)պարտատերերը պահանջ կարող են ներկայացնել գրավոր ձևակերպված Հիմնարկի իրավաբանական հասցե առաքված գրությամբ,

4) Լուծարման հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում ավարտել Հիմնարկի լուծարման գործընթացը և 20-օրյա ժամկետում լուծարումից հետո մնացած գույքը հանձնել ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկի հաշվեկշռին:

Կողմ (9)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ		
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ		
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ		
ՁԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ		
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ		
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

2016թ. հոկտեմբերի 18

ք. Մեղրի

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի
համայնքի ավագանու 2016 թ.
հոկտեմբերի 18-ի N20-Ա որոշման

ԿԱԶՄ
«ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՅՐ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱՐԿԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ՝
Վանիկ Սարգսյան
Անդամներ՝
Էմմա Ավետիսյան-«Մեղրի քաղաքի կենտրոնական մայր գրադարան» հիմնարկի տնօրեն
Արմինե Արզումանյան--«Մեղրի քաղաքի կենտրոնական մայր գրադարան» հիմնարկի հաշվապահ
Արթուր Հայրապետյան- Մեղրիի համայնքապետարանի գլխավոր մասնագետ
Սվետլանա Հակոբյան- Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

գրության 14-րդ կետով, առաջնորվելով հիմնարկի կանոնադրությամբ և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-9, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Լուծարել «Մեղրիի քաղաքային մարզադպրոց» հիմնարկը (այսուհետ՝ Հիմնարկ)՝ առանց իրավահաջորդի:
2.Հաստատել լուծարման հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
3.Հաստատել լուծարման հետևյալ կարգը և պայմանները՝
1)Լուծարումն իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սահմանված կարգով,
2)պարտատերերի պահանջ ներկայացնելու ժամկետ սահմանել երկու ամիս,
3)պարտատերերը պահանջ կարող են ներկայացնել գրավոր ձևակերպված Հիմնարկի իրավաբանական հասցե առաքված գրությամբ,
4) Լուծարման հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում ավարտել Հիմնարկի լուծարման գործընթացը և 20-օրյա ժամկետում լուծարումից հետո մնացած գույքը հանձնել ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկի հաշվեկշռին:

Կողմ (9)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՁԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ

Դեմ(0)

Ձեռնպահ(0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

2016թ. հոկտեմբերի 18
ք. Մեղրի

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի
համայնքի ավագանու 2016 թ.
հոկտեմբերի 18-ի N21-Ա որոշման

ԿԱԶՄ
«ՄԵՂՐԻԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱՐԿԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ՝
Վանիկ Սարգսյան
Անդամներ՝
Իշխան Միրզոյան- «Մեղրիի քաղաքային մարզադպրոց» հիմնարկի տնօրեն
Ռիտա Վարդանյան- «Մեղրիի քաղաքային մարզադպրոց» հիմնարկի հաշվապահ
Արթուր Հայրապետյան- Մեղրիի համայնքապետարանի գլխավոր մասնագետ
Սվետլանա Հակոբյան- Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 74-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի N708-Ա որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-9, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

Անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Նռնաձոր համայնքի ավագանու 2016 թվականի օգոստոսի 27-ի «Մկրտիչ Բոյաջյանին գույք նվիրելու մասին» N30-Ն, «Արշալույս Հենրիկի Մարկոսյանին գույք նվիրելու մասին» N31-Ն և «Ալեն Գագիկի Առաքելյանին գույք նվիրելու մասին» N32-Ն որոշումները:

Կողմ (9)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ		
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ		
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ		
ՁԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ		
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ		
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

2016թ. հոկտեմբերի 18
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2016 թվական N23 - Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՎԱՆԻՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունվարի 17-ի N30-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1918 որոշումով, հիմք ընդունելով «ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ-ի 10 հոկտեմբերի 2016 թվականի N4870 գրությունը, համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-9, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Շվանիձոր բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում առաջարկվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է համայնքի վարչական տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող 09-074-0434-0002 կադաստրային ծածկագրից առանձնացված անտառային հողեր կատեգորիայի թփուտներ գործառնական նշանակության 0,04հա (1 միավոր) հողամասը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների կատեգորիա՝ «կապի հողեր» գործառնական նշանակությամբ՝ բջջային կապի կայան կառուցելու համար:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին կազմել համապատասխան հողաշինարարական գործ և օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ՀՀ վարչապետի 2009թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը:

Կողմ (9) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՁԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

2016թ. հոկտեմբերի 18
ք. Մեղրի